ԵՐԵՎԱՆԻ
ՄԱՄՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ

ԵՐԵՎԱՆԻ ՄԱՄՈՒԼԻ ԱԿՈՒՄԲԻ

ԱՄԵՆԱՄՅԱ ՄՐՑԱՆԱԿ 2016

2016թ. ՀՈՒԼԻՍԻ 18-ԻՆ մայրաքաղաքի «Էրեբունի-Պլազա» բիզնես կենտրոնում Երևանի մամուլի ակումբը նշեց հիմնադրման 21-րդ տարեդարձը և համաձայն ավանդույթի, ԵՄԱ ամենամյա մրցանակները հանձնեց 2016 թվականի մրցանակակիրներին:

ԵՄԱ ամենամյա մրցանակը սահմանվել է 1998-ից և տրվում է Հայաստանի լավագույն լրագրողներին, ԶԼՄ-ներին և մեդիա-կազմակերպություններին:

2005 թվականին, 10 ամյակի առթիվ, ԵՄԱ վարչությունը ավանդույթ է ձևավորել՝ շնորհելու նաև անվանական մրցանակներ կյանքից անժամանակ հեռացած այն գործընկերների հիշատակին, որոնք կազմակերպության կայացման և զարգացման գործում մեծ ավանդ են ունեցել. Վալերի Այդինյան, Տիգրան Նաղդալյան, Ռուբեն Մանգասարյան, Արմեն Նիկողոսյան:

2016թ. ԵՄԱ ամենամյա մրցանակաբաշխության արարողության ժամանակ հանձնվեցին նաև ԱՄՆ ՄԶԳ աջակցությամբ և Համայնքների ֆինանսիստների միավորման հետ համագործակցությամբ իրականացվող «Հանրային մասնակցություն տեղական ինքնակառավարմանը» (ՀաՄաՏեղ) ծրագրի հատուկ մրցանակները:

Երևանի մամուլի ակումբի 2015-2016թթ. մրցանակակիրներ

ԵՄԱ մրցանակ

Արմեն ՄԱՆՈՒԿՅԱՆ, լրագրող՝ Հայաստանում և արտերկրում հայկական ջազի հետևողական հանրահռչակման համար: Մրցանակը հանձնեց ԵՄԱ վարչության անդամ, գերմանական «Դոյչե Վելլե» մեդիա հոլդինգի հայաստանյան թղթակից Աշոտ Գազազյանը:

ԵՄԱ մրցանակ

Թեհմինե ԵՆՈՔՅԱՆ, Lragir.am-ի թղթակից՝ «Իրավունքի նվաճման քրոնիկոն» և «Պարբերական հիվանդություն» վավերագրական ֆիլմերի համար: Մրցանակը հանձնեց Երևանի մամուլի ակումբի վարչության անդամ, մեդիա փորձագետ Մեսրոպ Հարությունյանը:

ԵՄԱ մրցանակ

Բաբկեն ԹՈՒՆՅԱՆ, «168 ժամ» թերթի տնտեսական մեկնաբան՝ տնտեսական թեմաների հետևողական և որակյալ լուսաբանման համար: Մրցանակը հանձնեց Երևանի մամուլի ակումբի վարչության անդամ, Համաշխարհային բանկի երևանյան գրասենյակի արտաքին կապերի պատասխանատու Վիգեն Սարգսյանը:

Ռուբեն Մանգասարյանի անվան մրցանակ

Հակոբ ՊՈՂՈՍՅԱՆ, լուսանկարիչ-օպերատոր՝ Արցախյան պատերազմի ֆոտովավերագրությունը անձնվիրաբար և հետևողականորեն իրականացնելու համար: Մրցանակը հանձնեց Ռուբեն Մանգասարյանի եղբայրը՝ «Պատկեր» ստուդիայի տնօրեն Տիգրան Մանգասարյանը:

Վալերի Այդինյանի անվան մրցանակ

Զավեն ԽԱՉԻԿՅԱՆ, Ֆոտոթրեյնինգի կենտրոնի հիմնադիր և ղեկավար՝ Հռոմի Ֆրանցիսկոս Պապի՝ Հայաստան այցին նվիրված ֆոտոհրապարակախոսական շարքի համար:
Մրցանակը հանձնեց գրող, հրապարակախոս Վահրամ Մարտիրոսյանը:

Երևանի մամուլի ակումբի և Համայնքների ֆինանսիստների միավորման հատուկ մրցանակ

ԳՈՐԻՍԻ ՄԱՄՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ՝ ՏԻՄ բարեփոխումների թեմայի հանրայնացումը լավագույնս իրականացնելու համար: Մրցանակը հանձնեց Համայնքների ֆինանսիստների միավորման նախագահ Վահան Մովսիսյանը:

Ագնեսա ՀՈՎԱԿԻՄՅԱՆ, «Կոտայք» թերթի թղթակից՝ մարզային մամուլում երկարատև և նվիրված աշխատանքի համար: Մրցանակը հանձնեց ԵՄԱ ծրագրերի համակարգող Հայկակ Արշամյանը:

Գայանե ՄԿՐՏՉՅԱՆ, ազատ լրագրող՝ մարզային կյանքի կարևորագույն խնդիրների հետևողական լուսաբանման համար: Մրցանակը հանձնեց «Համայնք-ՀաՄաՏեղ» թերթի խմբագիր Արևհատ Գրիգորյանը:

Շողիկ ԳԱԼՍՏՅԱՆ, Araratnews.am-ի թղթակից՝ տեղական ինքնակառավարման թեմաների ակտիվ լուսաբանման համար: Մրցանակը հանձնեց Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի խորհրդի նախագահ Լևոն Բարսեղյանը: